

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

ՊԱՏՐԻԱՐԺ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԱՅՑԸ ԷԶՄԻԱԾԻՆ

Երուսաղեմի Պատրիարք, Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, ընկերակցութեամբ Տ. Ժիրայր Ծ. Վրդ. Թաշեանի, Սեպտ. 20-29 օրերուն, մասնակցեցաւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի ընդլայնուած նիստին, նախագահութեան ներքեւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին եւ մասնակցութեամբ Երուսաղեմի եւ Կ. Պոլսոյ Սրբազան Պատրիարքներուն, եւ ներքին եւ արտասահմանեան թեմերէն հրաւիրուած թեմակալ Առաջնորդներուն:

Կիրակի Սեպտ. 19ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ Ս. Պատարագ մատուցանեց եւ քարոզեց Ամերիկայի Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան: "Հայր Մեր"էն առաջ, Պատրիարք Ս. Հայրը նախագահեց Հայաստանի Անկախ Հանրապետութեան երկրորդ տարեդարձի գոհաբանական մաղթանքին, Վեհափառ Հայրապետին ներկայութեան: Յետ միջօրէի ժամը 2ին, Երեւանի օփերայի տան մէջ ներկայ եղաւ Ֆրանսացի թատերագէտ Կռոնելի "Պողիկտոս" անունով կրօնաշունչ օփերային ներկայացման, Օհան Տուրեանի ղեկավարութեամբ: Օփերան առաջին անգամ քննադրուած է 1848 Նաբոլի "Սան Կարլօ" թատրոնի մէջ: Հայաստանի մէջ առաջին քննադրութիւնը կատարուեցաւ 1993 Յուլիս 17ին:

Երեքշաբթի, Սեպտ. 21 առաւօտեան, Հայաստանի Հանրապետութեան Լուսաւորութեան հրաւերով մասնակցեցաւ Երեւանի "Արգենտինայի Հանրապետութեան" թիւ 76 Միջնակարգ դպրոցի անուանակոչութեան հանդիսաւոր արարողութեան, ի ներկայութեան Հայաստանի Հանրապետու-

թեան Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի, ներկայացնելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը եւ անոր Օրհնութիւնները փոխանցելով ներկաներուն:

Նոյն օրը յետ միջօրէին, Մարգահամերգային համալիրին մէջ կազմակերպուած Հայաստանի Անկախ Պետականութեան երկրորդ տարեդարձի տօնախմբութեան ներկայ եղաւ:

Հինգշաբթի, Սեպտ. 23ին, երեքօրեայ ուղեգնացութեամբ մեկնեցաւ Արցախ, Թեմի Առաջնորդ Գեր. Տ. Պարգեւ Եպս. Մարտիրոսեանի առաջնորդութեամբ, եւ ընկերակցութեամբ Եգիպտոսի հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Արք. Զինչինեանի եւ Մ. Ն. Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոսին:

Արցախի մէջ "Հրաշափառ"ով պաշտօնապէս մուտք գործեց Շուշիի Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցին, ուր ի պատասխան Արցախի Թեմին Առաջնորդ Տ. Պարգեւ Եպիսկոպոսի "Բարի Գալուստի" խօսքերուն, Պատրիարք Սրբազան Հօր ընկերակցող Առաջնորդ Սրբազան Հայրերն եւս իրենց քաջախեղութեան եւ ապահովութեան մաղթանքները արտայայտեցին ժողովուրդին եւ հաւաքուած Հայ Դպրոցի աշակերտութեան: Ներկայ էին Հայ Քաղաքագլուխը իր օգնականներով, եւ Ղարաբաղեան մարտիկներու ղեկավարներ:

Ապա անոնք այցելեցին շրջանի քաղաքներն ու վանքերը, ընդ որս Ստեփանակերտ, եւ քարձրացան մինչեւ Դադիի Ս. Աստուածածին եւ Գանձասարի Ս. Յովհաննէս-Մկրտիչ վանքերը:

Ամենուր Պատրիարք Ս. Հայրը եղաւ իր ժողովուրդի զաւակներուն հետ, աղօթեց իրենց հետ եւ իրենց համար, եւ իր

միխիթարական եւ հոգեշունչ խօսքերով գօտապնդեց գիրենք, իրենց օրհասական գոյամարտը փառաբանաբար մղելու, եւ տէր եւ պաշտպան կենալու իրենց հողերուն:

Շաբաթ 25 Սեպտ.ին, առաւօտ կանուխ նոյն քանապարհով վերադարձին, եօթը ժամ ինքնաշարժով, անոնք իրենց քամբուն հանգրուանեցին Լաչին, Գորիս եւ ուրիշ ֆաղաֆներ:

Նոյն օրը յետ միջօրէի ժամը 2ին, ներկայ եղաւ Երեւանի Օփերայի տան մէջ տրուած երաժշտական յայտագրին, Օհան Տուրեանի ղեկավարութեամբ:

Կիրակի 27 Սեպտ., վարագայ Ս. Խաչի տօնին եւ Ամենայն Հայոց Հայրապետի Գահակալութեան երեսունութերորդ տարեդարձին առիթով, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանեց, ֆարոգեց եւ Գոհաբանական մաղթանքով նշեց Վեհափառ Հայրապետի ծննդեան ութսունհինգ, ֆահանայութեան յիսուն, եւ Կաթողիկոսական Գահակալութեան երեսունութ ամեակները, Վեհափառ Հայրապետի ներկայութեան:

Նոյն օրը յետ միջօրէի ժամը 4ին, Էջմիածին ֆաղափի Կիրակնօրեայ հոգեւոր Դպրոցի դասընթացքներուն ներկայ եղաւ եւ ֆաջալերական յորդորներով իր օրհնութիւնները բաշխեց ներկայ ծնողներուն, ուսուցչական կազմին եւ աւելի քան երկուհարիւրյիսուն երկսեռ աշակերտութեան՝ Էջմիածին ֆաղափէն եւ շրջակայ աւաններէն:

Երկուշաբթի Սեպտ. 27ի առաւօտեան ժամը 11ին Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի պատուոյ անդամ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վեհափառ Հայրապետ Վազգէն Աի ծննդեան ութսունհինգ ամեակին նուիրուած Գիտական նստաշրջանին ներկայ գտնուեցան Առաջնորդները եւ հոգեւորականաց դասը, գլխաւորութեամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Ելոյթներ ունեցան Պրեզիդենտ ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսեան, հայոց փիլիսոփայական ակադեմիայի Պրեզիդենտ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտեան, եւ շարք մը բանասիրական գիտութիւններու Դոկտորներ, ակադեմիկոս եւ ճարտարապետ գեղանկարիչներ: Հուսկ ապա հանդէս եկաւ արուեստի թեկնածու Մանեա Ղազարեան, ներկայացնելով այնքան յուզիչ կերպով Վեհափառ Հայրապետի թանգարանային գործունէութիւնը: Նոյն օրը յետ միջօրէի ժամը 2ին, Եգիպտոսի հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Արք. Զինչինեանի հետ պաշտօնական այցելութեամբ ճաշի հիւրը եղաւ Երեւանի մէջ Եգիպտոսի վսեմաշուք Դեսպանորդ Ահմատ Ասլանի բնակարանին մէջ, ընկերակցութեամբ Յունաստանէն Գերշ. Տ. Ոսկան Եպս. Գալփաֆեանին:

Երեքշաբթի, Սեպտ. 28ին, "Գթութիւն" Եղբայրակցութեան վարիչներու խնդրամբով եւ ընկերակցութեամբ Գերշ. Տ. Զաւէն Արքեպիսկոպոսի, Գեր. Տ. Վիգէն Եպս. Այֆազեանի եւ Տ. Վաչէ Իգնատիոսեան Մայրագոյն վարդապետի, Պատրիարք Սրբազանը այցելեց Երեւանի "Մեսրոպ Մաշտոց" հոգեւոր գրականութեան գրախանութիւնը: Նոր եւ հին կրօնական հրատարակութիւններ, սրբանկարներ, երգաժապաւէններ, աղօթագրքեր ժողովուրդին մատչելի գիւնեքով տրամադրելի էին: Կէսօրուան երկու ժամերուն համար, ըստ սովորութեան, գրախանութի ետեւի սենեակի մը մէջ հաւաքուած էին մօտ յիսուն այրեր եւ կիներ, եւ երիտասարդներ, ի ձեռքն ունենալով մասնաւորապէս տպուած հոգեւոր շարականներ եւ երգեր, եւ միասնաբար կ'երգէին եւ կ'աղօթէին աշխարհի խաղաղութեան եւ Հայաստանի ապահովութեան համար: Կարճ ժամանակով հոգեւորականները մասնակցեցան խումբին աղօթքին, եւ Պատրիարք Սրբազանը եւ Զաւէն Սրբազանը ֆաջալերեցին զանոնք:

իրենց հոգեւոր կրթանքը շարունակելու և տարածելու:

Կէսօրին, Վեհարանին մէջ, Վեհափառ Հայրապետին կողմէ տրուած ողջերթի ճաշին Պատրիարք Սրբազանը և հոգեւորականները մասնակցեցան: Մաղթանքներ եղան Վեհափառ Հայրապետի առողջութեան, Մայր Աթոռի առաքելութեան յաջողութեան, և Հայաստանի ապահով անդորրութեան:

Երեկոյին Պատրիարք Սրբազանը պատեհութիւն ունեցաւ այցելելու մանկատուններ ուր մանուկներ կը հոգատարուին զանազան խմբաւորումներով, իրրեւ մտքով և ֆիզիքապէս տկարներ, ծնողագուրկ որբեր և կարօտ ընտանիքներու զաւակներ:

Զորեքշաբթի Սեպտ. 29ին, Երեւանի Ս. Սարգիս եկեղեցւոյ համալիրին մէջ, ժամը 10.30-12, Պատրիարք Սրբազանը զբաղած էր հարցազրոյցով թերթի թղթակիցներու հետ, նաեւ հարցազրոյց նկարահանումով Երեւանի հեռուստացոյցի յայտագրին համար:

Հանդիպումներ ունեցաւ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարար Վահան Փափագեանի, տեղակալ Արման Կիրակոսեանի, և օգնականներուն՝ Հէնրիկ Գրիգորեանի և Արսէն Գասպարեանի հետ, Իսրայէլի մէջ Հայ Հիւպատոսարան հաստատելու ծրագիրներու կապակցութեամբ: Այս մասին աշխատանք տարուած է Պատրիարք Սրբազանի գլխաւորած յանձնախումբի կողմէ Երուսաղէմի մէջ, և ծախուց նախահաշիւ մը ներկայացուած է:

Երեւանի արուարձաններէն մէկուն մէջ, Հայ Առաքելական Եկեղեցւոյ աղօթաժողովներ կ'ունենայ Կիրակի և Զորեքշաբթի օրերը, կէսօրէ յետոյ ժամը 4ին: Պատրիարք Սրբազանը, ընկերակցութեամբ Տ. Ժիրայր և Տ. Վաչէ Ծայրագոյն վարդապետներուն, ներկայ եղաւ աղօթաժողովին: Երկու հազար աթոռ ունեցող սրահը լեցուն էր մեծ ու փոքր հայորդիներով: Ելեւտրականութեան չգոյութեան պատճառով, բեմին կողմը լոյսի կարգադրութիւն եղած էր, և փոքրիկ երգեհոնի մը ընկերակցութեամբ Հայ եկեղեցւոյ շարականներ, մեղեդիներ, Ս. Պատարագէն երգեր երգուեցան: Քարոզիչ-վարիչ Յաննանիսումբի անդամներէն մէկը Ս. Գրական, հոգեւոր պատգամ մը տուաւ: Պատրիարք Սրբազանը "Առտին եկեղեցիի" քրիստոնէական ըմբռնումը բացատրելով օրհնեց բազմութիւնը, որոնք հաւատքով և խանդավառութեամբ կը մասնակցին այս աղօթաժողովներուն:

Հինգշաբթի լուսցող առաւօտուն ժամը 4ին ճամբորդները պատրաստ էին մեկնելու դէպի Զուարթնոց օդակայանը, և Երեւան-Բարիզ Հայկական օդանաւի թռիչքով հրաժեշտ առին Մայր Հայրենիքէն:

Հոկտեմբեր 3, Կիրակի երեկոյին Պատրիարք Սրբազանը Բարիզէն Երուսաղէմ Ս. Աթոռ վերադարձաւ:

ԺԻՐԱՅԻ Մ. ՎՐԴ. ԹԱՇՃԵԱՆ